368.5
Հ-11

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ!

# ՀՐԱՀԱՆԳ

## ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԳՅՈՒՂ. ՏՆՏ. ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՎՆԱՍՆԵՐԻ ԼՈՒԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ
Անվան

ՅԵՐԵՎԱՆ 1927

2802-10

368.5
Հ-11

1003
13926

# ՀՐԱՀԱՆԳ

## ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԳՅՈՒՂ. ՏՆՏ. ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՎՆԱՍՆԵՐԻ ԼՈՒԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

## ԱՆԿՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

§ 1. Գործակալը պետք է ամեն միջոց ձեռք առնի բնակչության ամենալայն շերտերին իրազեկ դարձնելու անկման մասին անմիջապես հայտնելու անհրաժեշտության. համենայն դեպս ոչ ուշ քան երեք օր անկումից հետո հայտնելու գործակալին, կամ անասնաբուժին և կամ տեղական իշխանության։

§ 2. Հիմնարկությունները (գյուղխորհուրդը) և պաշտոնատար անձինք պարտավոր են տալու համապատասխան վկայական (ձև Ապահ. № 14) առ այն, որ ընդունել են անասունի անկման մասին դիմումը ըստ ստացման կարգի՝ նշելով այդ վկայականում ժամանակը, անկման ժամանակը, մահացած անասունի սեռը, անասնատիրոջ անունը, հայրանունը և՝ ազգանունը և նրա ճիշտ հասցեն։

09 SEP 2013

44.241



Դիմումների գրքույկը ձև №15 պետք է համարակալված լինի և չենթակա ստուգման գործակալի կամ պետական ապահովագրական մարմինների կողմից լիազորված անձնավորությունների կողմից

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ ԳՅՈՒՂԱՏՆՏ. ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՎՆԱՍԻ ԼՈՒԾԱՐՔԻ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ ՅԵՎ ԼՈՒԾԱՐՔԱՅԻՆ ԱԿՏ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

§ 3. Անասունի անկման ակտը պետք է կազմված լինի ամենաճիշտ կերպով, յուրաքանչյուր անասունի համար առանձին, անկախ այն հանգամանքից թե նա չենթակա չէ վճարման կամ մերժման:

4. Ակտը պետք է կազմել անասունի անկումից հետո անմիջապես նրա դիակը զննելուց հետո: Նոյեմբերի 1-ից մինչև ապրիլի 1-ը. ակտը պետք է կազմվի ոչ ուշ քան չորս օրից հետո. իսկ ապրիլի 1-ից մինչև նոյեմբերի 1-ը՝ ոչ ուշ քան յերկու օրից:

§ 5. Լուծարքագ-ակտ կազմողները հանդիսանում են պետապի գործակալները, տեղական իշխանության ներկայացուցիչները (գյուղխորհուրդները) և շրջանային անասնաբույժը: Ակտը ով ել վոր կազմելու լինի, տեղական իշխանության ներկայացուցչությունը անհրաժեշտ է:



ԾԱՆՈԹ. Գործակալը պետք է հարկավոր չափով ծանոթացնի գյուղխորհուրդներին և այդ լուծարքագներին ակտ կազմելու կարգի մասին:

§ 6. Դիակը զննելիս և ակտը կազմելիս պետք է ներկա լինեն նաև յերկու վկաներ, վորոնք ազգական չեն ապահովագրվողին և նրա մոտ չեն ծառայում:

§ 7. Ակտը կազմվում է մեկ օրինակից ապագրված բլանկի վրա սահմանված ձևով (№ 17) անպայմանորեն լրացնելով ակտի բոլոր կետերը: Վնասվողի անունը, հայրանունը, ազգանունը, ինչպես և բնակության տեղը ցույց է տալիս գյուղխորհուրդը: Գյուղխորհուրդն է լրացնում ակտի առաջին առանձնակ կետերը և 13-րդ կետը. մնացածը լրացնում է գործակալը: Ըստ բոլոր կետերի պետք է տրվի մանրամասն վորոշ ու պարզ պատասխան, կամ բացասական կամ դրական: Լրացված ակտը վերադարձվում է գյուղխորհրդին լրացնելու նրա ամենաեյական կետերը, վորոնք անհրաժեշտ են հաստատելու համար անկման փաստը և ապահովագրվողի վնասը ստանալու իրավունքը. Մնացած բոլոր դեպքերում վնասը վճարվում է անմիջապես, վճարման ժամանակ գյուղխորհրդից պահանջվում է պակասող տեղեկությունները:

§ 8. Ակտը պետք է կնքված լինի տեղական իշխանության կնիքով և ստորագրված նրա ներկայացուցչի կողմից, ինչպես և ակտը կազմողի, յերկու վկաների և անտառատիրոջ կողմից:

§ 9. Ակտի կազմելը ուշացնելը պատրաստի բլանկների բացակայության պատճառով, կամ հետադարձ թվով կազմելը անթույլատրելի յե: Գործակալը պետք է իր ժամանակին հոգ տանի ակտը ստացվելուն և այն բաժանի լուծարք կատարողներին ու հետևի հետևի նրանց ստացվելուն:

§ 10. Ակտը գրվում է մի գույնի թանաքով, կամ քիմիական մատիտով. պարզ ու առանց ուղղումների ու մաքրումների: Ամեն մի ուղղում պետք է մակագրվի և ստորագրվի ակտը ստորագրողների կողմից: Ակտի հիմնական տեքստի ուղղումը մի միայն գործակալի կողմից թույլ չի տրվում:

§ 11. Անվորոշ բառերը, տառերը կամ թվերը պետք է դարձնել պարզ. մակագրելով վերևում կամ լուսանցքում: Ակտի բոլոր թերությունների ու անճշտությունների համար գործակալը նշում է իր յեզրակացության մեջ ակտի վերջում: Նույնպես յեզրակացության մեջ գործակալը մատնանշում է այն պատճառը, վորի հե-



տևանքով ակտը ուղարկվում է գրասենյակ առանց վճարելու. առանց բացատրության ակտը ուղարկել գրասենյակ ի տնորինություն տեղի չպիտի ունենա. պետք է յեզրակացության մեջ բացատրվի պատճառները:

§ 12. Անտառաբուժի կազմած ակտում, մնացած անտառանի գինը գնելուց հետո, պետք է լինի նրա. անտառաբուժի յեզրակացությունը:

ԾԱՆՈԹ.— Յեզրակացության տալու համար հրավիրվում են միայն պետական ծառայության մեջ գտնվող անտառաբուժները. մասնավոր անտառաբուժներին թույլատրվում է միայն Հայպետառի թույլտվությամբ:

§ 13. Ձիերի անկման ակտերն լուծարքայինները և գյուղխորհուրդները պետք է կցեն ակտին անհատական հաշվառման քարտը: Քարտի վրա գործակալը նշում է «մահացել է ............ ............ «............» 192__ թ. լուծարքային ակտ № ......... ըստ ........................................ ապահովագրված շրջանի»: Քարտը, այդորինակ նշումներից հետո, վերադարձվում են գյուղխորհրդին կամ շրջգործկոմին:

§ 14 Ակտի հետ ներկայացվում է նաև ապահովագրական անդորրագիրը, յեթե վերաբերում է միայն այդ մահացած անասունին: Իսկ յերբ անդորրագրով ապահովագրված են մի քանի

*անտառներ, պետք է նրա վրա մակագրել «ստացել է ............................ «......» 192..... թ. լուծարքային ակտ № ............... ըստ ............... ............... ապահովագրական շրջանի»։ Այդ վերջին դեպքում ապահովագրական անդորրագիրը վերադարձնվում է ապահովագրվողին։*

§ 15. *Գործակալը պետք է ամեն միջոց ձեռք առնի շուտ կերպով լուծարքելու բոլոր անկումները։ Ցեթե գործակալության դրամարկղում դրամ չլինի, գործակալը պետք է իր ժամանակին հոգ տանի ուղղակի գրասենյակից ստանալու։*

## ԱԿՏԵՐԻ ԱՌԱՔՈՒՄԸ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

§ 16. *Լուծարքայինները (գյուղխորհուրդ, անասնաբույժ) ակտերը անմիջապես ուղարկում են գործակալին պաշտոնական ձևով, ըստ համարի՝ մուծելով այդ համարը ելից մատյանում։ Ակտերի ուշացնելու դեպքում պահանջվում է ընդարձակ բացատրություն այն անձնավորությունից, կամ հիմնարկությունից որը ուշացրել է ակտը։*

§ 17. *Մեկ տարով և ավելի ուշացած ակտով վճար կարելի չէ բավարարել միայն գրասենյակի թույլատվությամբ, ուստի գործակալը*



*պետք է հոգ տանի վարչական լուծարքայինները իրա ժամանակին կազմեն և ուղարկեն ակտերը և այդ մասին ամենայն կերպով իրազեկ դարձնել լուծարքայիններին և բնակչությանը։*

## ԱԿՏԵՐԻ ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒՄԸ ՅԵՎ ԳՐԱՆՑՈՒՄԸ

§ 18. *Ակտի համարը ըստ գյուղխորհրդի և նրա շրջգործակալին ուղարկելու ժամանակը գրվում է աջ և վերին անկյունում։*

§ 19. *Գործակալները ակտը ստանալու թվագրությունը նիշում են ակտի աջ վերին անկյունում։ Ակտը գրասենյակ ուղարկելու ժամանակի թվագրությունը, ակտի №-ը ըստ գրասենյակի և գրասենյակում նրա ստացվելու ժամանակի թվագրությունը գրվում է ձախ վերին անկյունում։*

§ 20. *Ակտի №-ը ըստ գործակալության տրվում է «Ակտ» վերնագրի կողքին և առհասարակ ամեն տեսակի գրությունների և տեղեկությունների համար հիմնվում են այդ №-ի վրա, որպես հիմնական։ Գործակալության մոտ ակտերի գրանցումը կատարվում է հատուկ կետարում ըստ Ապապ-ի ձև № 15-ի։*

§ 21. *Գործակալության ակտերի №№-ի թվագրությունը ընդհանուր է ըստ բոլոր ապահովագրությունների թե պարտադիր կամա-*

րային ապահովագրությամբ և թե լրացուցիչ բոլոր անկումները այլոց գործառնական տարվա ընթացքում, այսինքն հոկտեմբերի 1-ից մինչև հետևյալ հոկտեմբերի 1-ը պահպանում են հաջորդական №№ թեկուզ և լուծարքը կատարված լինի հետևյալ գործառնական տարում: Ակտերի նոր համարակալումը սկսվում է նոր հոկտեմբերի մեկից սկսած անասունների անկումների համար:

## ԱԿՏԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄԸ ԳՈՐԾԱԿԱԼԻ ԿՈՂՄԻՑ

§ 22. Գործակալը ամենամանրակրկիտ կերպով ստուգում է ամեն մի ակտը թե ըստ կազմության ձևի և թե ըստ էության համեմատելով գործակալության ունեցած փաստաթղթերի հետ, հարցաքննելով տուժողին և առհասարակ ստանելով բոլոր հնարավոր միջոցները: Գործակալը յուր շրջագայությունների ժամանակ, տեղում ստուգում է ակտում թված տեղեկությունները, թեկուզ և ակտը արդեն բավարարված լինի. գյուղական ժողովներում պետք է հայտարարվի թե երբ, ում և ինչքան է վճարված ապահովագրական վարձատրություն. ինչպես և թե ում ու ինչու է մերժված: Անհրաժեշտ է գյուղխորհուրդներում կախ տալ ցուցակներ այդ որինակ տեղեկություններով (ձև № 12):



ԾԱՆՈԹ.—ա) Մնացած անասունների քանակը այլոց տուժած անտեսության մեջ, պետք է ստուգել կոպարային ցուցակի (ձև № 1) տվյալների հետ:

ԾԱՆՈԹ. բ) Եթե կհաստատվի, որ ապահովագրվողը դիտավորյալ կերպով ցուցակագրության ժամանակ թաքցրել է կոպարային ապահովագրության ենթակա անասունների թիվը, և անասունի անկման ժամանակ կպարզվի, որ ապահովագրական հասակի միևնույն տեսակի անասունների քանակը ավելի է ցուցակագրված թվից (§ 36 կանոնների կետ «դ»)բավարարումը մերժվում է:

§ 23. Գործակալը, ակտերը ստուգելիս անում է համապատասխան նշումներ կոպարային ցուցակներում (ձև № 1.) անասունի անկման մասին, մատնանշելով ակտի №-ը և այն բոլորը ինչ որ մատնանշված է սույն հրահանգի §§ 13 և 14-ում:

## ԱԿՏԵՐԻ ԱՌԱՔՈՒՄԸ ԳՐԱՍԵՆՅԱԿ

§ 24. Գործակալը ակտերը ուղարկում է հանրապետական գրասենյակը.

ա) վճարված ակտերը (ապահովագրվողի ստորագրությամբ ապահովագրական վարձատրության ստանալու մասին) անմիջապես ուղարկվում է գրասենյակ:

բ) Չվճարված ակտերը, որոնք պետք է քննվեն հետագա վերադաս ինստանցիայում, ուղարկվում են դրամենյակ անմիջապես։

## ԱԿՏԵՐԻ ՎՃԱՐՈՒՄԸ

§ 25. Ապահովագրական վարձատրության վճարման հիմք կարող է լինել միմիայն լուծարքային ակտը։ Մյուս փաստաթղթերը (տեղեկանքներ, վկայականներ) վճարման հիմք ծառայել չեն կարող։

§ 26. Ապահովագրական վարձատրության վճարումը կատարում է ինքը գործակալը կամ նրա օգնականը հրապարակով, անասունի անկման տեղում կամ տուժողի բնակավայրում։ Նախ քան վճարելը գործակալը պետք է մանրամասն հարցաքննի տուժողին, գյուղխորհրդին, համագյուղացիներին անկման հանգամանքների մասին և հատուկ ուշադրություն դարձնի հետևյալ պարագաներին. 1) տուժող տնտեսության անասունների փաստական քանակը և կողարային ցուցակի տվյալները. 2) որպես զի ապահովագրական վարձատրությունը ավելի չլինի մահացած անասունի փաստական արժեքից։ Գործակալության դրամենյակում վճարվում են միայն այն դեպքերում, երբ որևէ պատճառով հնարավոր չի լինել տեղում կատարելու վճարու-



մը, պայմանով սակայն, որ ամենափոքր կասկածն անգամ գոյություն չպետք է ունենա առ այն, որ տուժողը բացարձակ իրավունք ուներ ստանալու ապահովագրական վարձատրությունը։ Ապահովագրական վարձատրություն ստանալու համար հանրապետական դրամենյակ պետք է ուղղել տուժողներին միայն բացառիկ դեպքերում. այդ դեպքում տուժողին պետք է բացատրել թե նա ինչպիսի փաստաթղթեր պետք է ներկայացնի, և պետք է տալ նրան վկայական առ այն, որ գործակալությունը նա պետք չունի վճարելու։

§ 27. Ապահովագրական վարձատրությունը վճարվում է լրիվին. մաս-մաս վճարումները արգելվում է։

§ 28. Ոչ մի պահում տրված վարձատրությունից ի հանգցնումն տուժողի պարտքերի (մասնավոր և պետական) թույլ չի տրվում բացի նրա վրա մնացած ապահովագրական վճարումներից (տույժի հետ միասին), որը անպայմանորեն պետք է պահվի։ Պահումների համար տրվում է սահմանված ձևով անդորրագիր։

ԾԱՆՈԹ — Համաձայն կողարային պարտադիր և լրացուցիչ ապահովագրության կանոնների §§ 35 և 62 հրատարակած 1925 թ. մահացած անասունի ապահովագրական վարձա-

տրությունը տրվում է պետբանկին կամ մյուս պետական հիմնարկություններին, վորոնց կողմից տրված վարկի ապահովագրությունը կազմում էր այդ անասունը։

§ 29. Ապահովագրական վնասների հատուցման ուշացնելը վոչ մի պատճառով թույլ չի տրվում.

ա) Կոլտնտեսային ապահովության ակտերը, վորոնք վոչ մի կասկած չեն հարուցանում ապահովագրվողի իրավունքին ստանալու սահմանված վարձատրությունը և յերբ բավարարում են պետական ապահովագրության բոլոր կանոններին, բավարարվում են անմիջապես գործակալի կողմից և ուղարկվում են հանրապետական գրասենյակ ի հաստատություն։

բ) Կոլտնտեսային ապահովագրության այն ակտերը, վորոնք վորոշ կասկած են հարուցանում և յեթե այդ կասկածները կարելի յե վերացնել անասնաբուժի յեզրակացությամբ վորը կատարել է մահացած անասունի դիակի զննությունը, ապա ստանալով այդ յեզրակացությունը, բավարարվում են և ուղարկվում են հանրապետական գրասենյակը ի հաստատություն։

գ) Կոլտնտեսային ապահովագրության այն



ակտերը, վորոնց բավարարումը գործակալը ինքնուրույն կերպով չի կարողանում կատարել, չնայած անասնաբուժի յեզրակացության, շտապ կերպով ուղարկվում է գրասենյակ ի քննություն. սակայն գործակալը ակտի վրա իր յեզրակացությամբ կամ հատուկ գրությամբ բացատրում է չվճարելու պատճառները։ Այսպիսի ակտերը բավարարվում են գրասենյակից կարգադրություն ստանալուց հետո։

դ) Ըստ կամավոր ապահովագրության նորմալ գնահատությամբ անվիճելի ակտը բավարարվում է անասնաբուժի յեզրակացությունը ստանալուց հետո, իսկ կասկածելի ակտերը ուղարկվում են, գործակալի յեզրակացությամբ, գրասենյակ և բավարարվում են գրասենյակից կարգադրություն ստանալուց հետո։

Յեթե տուժողը յերկարատև բացակա յե կամ մահացել է, գործակալը վարձատրությունը վճարելիս պետք է տեղական իշխանությունից ստանալ գրավոր տեղեկանք թե ում պետք է վճարել վարձատրությունը. այդ տեղեկանքը կցվում է ակտին։

## ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԵԼԸ

§ 30. Ապահովագրվողը ապահովագրական վարձատրություն ստանալու մասին ստորագրում է հենց ակտի վրա։ Ստորագրությունը պետք է լինի ապահովագրական վարձատրության լրիվ գումարի համար։

ԾԱՆՈԹ.— Դրամական հաշվետվության հետ ստացական ուղարկելու կարիք չկա. դրամական հաշվետվությունը ներկայացնելիս մահացած անդամների ապահովագրական վարձատրության վճարման տեղեկագրի մեջ գործակալը ցույց է տալիս անդամի մահվան ժամանակը, գործակալության ակտի №-ը, ապահովագրվողի անունը, հայրանունը և ազգանունը, վճարած գումարը և վճարման ժամանակը։

§ 31. Ակտի վրա, ինչպես և ստացականը, տուժողը պետք է ստորագրի անձամբ, յերբ գրագետ է։ Յեթե ապահովագրական վարձատրությունը ստանալու իրավունքը տրված է մեկ ուրիշին, պետք է լինի գյուղխորհրդի կամ այլ պետական հիմնարկությունների կողմից հաստատված լիազորագիր։ Այդ հավատարմագիրը կցվում է ակտին։

ԾԱՆՈԹ.— Թե գործակալը և թե գործակալության մշտական աշխատավորները, իրավունք



չունեն հաստատել հավատարմագիրը, ստորագրել ակտերի կամ ստացականների վրա վորպես վկա և ստորագրելու անգրագիտության պատճառով՝ վորևէ փաստաթուղթ։ Ապահովագրվողի անգրագիտության պատճառով ուրիշի ստորագրությունը պետք է հաստատվի գյուղխորհրդի կողմից։

§ 32. Ստացականի մաքրումներ և ջնջումներ թույլ չի տրվում. ստացականի ուղղումները պետք է կատարվեն ուրիշ գույնի թանաքով և ստորագրվեն գործակալի կողմից, վորը դրամը վճարել է և ստացողի կողմից։

§ 33. Գրասենյակը այն ակտերի համար, վորոնք գործակալի կողմից համարվել են կասկածելի կամ ենթակա յեն մերժման, ուղարկվում է գործակալին ծանուցում բավարարելու կամ մերժելու մասին. ուղարկվում է ծանուցում նաև այն ակտերի մասին, վորոնք գրասենյակը չի հաստատել։

ԾԱՆՈԹ.— Յեթե գրասենյակը ուղարկում է ծանուցագիր, վորը վերաբերում է միաժամանակ մի քանի ակտերի, այդ դեպքում բնականը կցվում է մի ակտի, իսկ մյուսների վրա մակագրվում է այդ ծանուցագրի №-ը։

## ՄԻՍԸ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՎՆԱՍԻ ԲԱՎԱՐԱՐՈՒՄԸ

§ 34. Միսը օգտագործված անասունի վնասը, թե ըստ կողարային ապահովագրության և թե ըստ կամավոր ապահովագրության, բավարարվում է լրիվ ապահովագրական վարձատրության 60%-ի չափով։ Ցեղական անասունների մսի օգտագործման համար ապահովագրական վարձատրությունից պահվող գումարի չափը ավելի չպիտի լինի օգտագործման օբյեկտի շուկայի փաստական արժեքից. այդ վորոշում է գործակալը կամ անասնաբուժի ներկայությամբ կշռելով միսը, իսկ նրանց բացակայության դեպքում գյուղխորհրդի ներկայացուցչի կողմից ներկայությամբ յերկու վկաների (§ 26 և 32 կանոնագր.)

*ԾԱՆՈԹ.* — Անասնաբուժի յեզրակացությունը անասունի մորթելու անհրաժեշտության մասին նրա անբուժելի հիվանդության հետևանքով, վորը կարող եր, անասունի անկման դեպքում, վոչնչացնել նրա օգտավետությունը ամբողջապես. պետք է ձևակերպվի համաձայն անասունի հիվանդության մասին կատարված քննության, մանրամասն նշելով այն պատճառները, վորոնք անհրաժեշտ են դարձրել անասունի մորթելը։ Այն ձևական մասնցումը «անասնաբուժը մորթելու դեմ չե» կարող է պատճառ հանդիսանալ ապահովագրական վարձատրության մերժման։



§ 35. Սաստիկ անասնաբուժի յեզրակացության մորթած անասունի վնասը բավարարվում է միայն շատ բացառիկ դեպքերում, այսպես կոչված դժբախտ դեպքերից, առաջացած արտաքին ներգործություններից՝ այն է հարվածներից, վոտների կոտրվելուց, ծանր վիրավորվելուց և այլն։ Բոլոր այդպիսի դեպքերում, գործակալը պետք է աշխատի ամենայն կերպով և անկասկածելիորեն համոզվելու առաջացած դեպքերի մասին և պահանջել ակտ կազմողից ամենաճիշտ տեղեկություններ։

36. Այն դեպքերում, յերբ միսը բոլորովին չի օգտագործված, վնասը լրիվին բավարարվում է, յեթե գործակալը համոզվում է, վոր միսը ամբողջովին թաղված է կամ վոչնչացված է։

37. Մորթված անասունների վնասը բավարարելիս պետք է ղեկավարվել կողարային և լրացուցիչ ապահովագրությունների կանոնադրությամբ հրատարակված 1925 թ. § 1. «դ» և «զ» 26, 32, 36 և անասնաբուժի յեզրակացությունը.

վոր է՝ 1) Համաձայն § 1։ «դ» և «զ» անհրաժեշտ է ի նկատի ունենալ, վոր ըստ կողա-

բալլին և լրացուցիչ ապահովագրությունների պետապը պատասխանատու չէ այն վնասներին, վորոնք առաջացել են՝ 1) հարկադրական մորթերուց անասնաբուժական պերսոնալի կարգադրությամբ, համաձայն անասնաբուժական կանոնադրության, վարակիչ հիվանդությունները արմատախիլ անելու համար: 2) Յեթե մորթվել և անբուժելի հիվանդության հետևանքով համաձայն անասնաբուժի վորոշման:

2) Համաձայն § 26-ի այն դեպքում, յերբ անասնաբուժի յեզրակացությամբ հիվանդությունը կարող է մահացու լինել կամ անասունը կարող է կորցնել իր բոլոր արտադրական ունակությունները (բանվորական, մսի, կաթնեղենականը). բայց չի խանգարում նրա մսի ոգտագործելուն, ապահովագրվողին առաջարկվում է մորթել այդպիսի անասունը: Յեթե ապահովագրվողը հրաժարվում է կատարել, այդպիսի դեպքում անասնաբուժի առաջարկությունը և հետևանքը յեղել է անասունի անկումը այդ միևնույն հիվանդությունից, ապահովագրական վարձատրությունը վորոշվում է 60%-ի չափով ապահովագրական գումարի:

3). Համաձայն § 32-ի անասնաբուժի յեզրակացության համաձայն, վորպես անբուժելի

1003
13926



հիվանդի, մորթված կամ նույն հիվանդությամբ մահացած անասունի, վորը չնայած անասնաբուժի առաջարկության չի մորթված, ապահովագրական վարձատրություն տրվում կանոնային ապահովագրության ապահովագումարի նորմայի 60%-ի չափով, ըստ վորում միսը և այլն մնում է հոգուտ ապահովագրվողի:

Նույն չափի ապահովագրական վարձատրություն է տրվում այն անասունի համար, վորը հարկադրաբար մորթված է, առանց անասնաբուժի յեզրակացության, դժբախտ պատահարների հետևանքով, վորը կարող էր անմիջակա մահ առաջացնել: Այս դեպքում հարկադրված մորթված անասունի համար կազմված ակտը պետք է հաստատվի այն գյուղխորհրդի կողմից, վորտեղ տեղի յե ունեցել դժբախտ դեպքը:

ԾԱՆՈԹ. 1. Հարկադրաբար մորթված անասունի ապահովագրական վարձատրությունը լրիվ չափով տրվում է այն դեպքերում, յերբ տվյալ վայրում տեղական բնակչությունը այդ անասունի միսը չի գործածում:

2. Մորթված անասունի ապահովագրական վարձատրությունը ըստ կանոնայինի և ըստ լրացուցիչ ապահովագրությունների տրվում է յերկուսը միասին գումարած՝

պայմանով սակայն, վոր վարձատրությունը ավելի չլինի անասունի իրական արժեքից։

4) Մորթված անասունի մսի բավարարումը մերժվում է համաձայն կանոնների § 36-ի։

§ 38 Յեթե միևնույն գյուղում կամ շրջանում անցի յե ունենում բավականին խոշոր թվով մորթված անասուններ առանց անասնաբուժի յեզրակացության, գործակալը, այդպիսի ակտեր նրան ներկայացնելիս բավարարելու համար, պետք է նախապես քննություն կատարի տեղական անասնաբուժի հետ պարզելու համար մորթելու պատճառները, հավաստիանալու այդ դեպքերին և անասնաբուժի հետ տալու թե համապատասխան են արդյոք այդ անհրաժեշտաբար մորթելու դեպքերը պետական կանոններին և կարգադրություններին։

Սրսկումներ չկատարելու հետևանքով մահացած և անասնատեխնիկական պերսոնալի [illegible] մորթված անասունների մսի բավարարումը։

§ 39. Այն դեպքերում և այն ժամանակ, յերբ կիրառվում է ընդհանուր պարտադիր սրսկում, յեթե մահանում է անասունը, նրա միսը բավարարվում է միայն այն դեպքում, յերբ անասնաբույժը հաստատում է, վոր սրսկումը չի կատարվել անկախ անասնատիրոջ կամքից։



§ 40. Յեթե անասունը մահացել է հարկադրական սրսկումներից կամ յեթե անասունը մորթված է վարակիչ հիվանդության հետևանքով, ապահովագրական վարձատրությունը տրվում է լրիվին, յերբ ապահովագրվողը ներկայացնում է անասնատեխնիկական պերսոնալի համապատասխան վկայական և յեթե ապահովագրվողը չի խախտել պետական ապահովագրության ընդհանուր կանոնները։

41. Անասունների անկման թիվը [illegible] և կեղծ ակտերի դեմ պայքարելու նպատակներով անհրաժեշտ է համաճարակից մահացած անասունների ակտերը, այն դեպքերում վորտեղ կատարվում է սրսկումը, համեմատել ու ստուգել անասնաբույժերի ցուցակների հետ։

**ՎԵՐՋ**

Հայպոլիգր. առաջին տպ. պատվ. № 71, տիրաժ. 300.
Գլավլիտ 436 գ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0311377

44.241